ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Ռաֆիկ Պետրոսյանի, Արամ Սաֆարյանի, Վարդան Բոստանջյանի և Կարինե Աճեմյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Նախագծի 1-ին հոդվածով ներկայացված փոփոխությունը հակասում է նույն օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասին: Հակասությունը լուծելու համար անհրաժեշտ է 55-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսել բացառություն սահմանող դրույթ:

Բացի դրանից, հոդվածի կիրառումը, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հանցակազմերի որոշ առանձնահատկությունները, գործնականում կարող է անհնար լինել. օրինակ, Հայաս-

տանի Հանրապետության քրեական օրենսգրքի 166-րդ, 195-րդ, 198-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների կատարման արդյունքում ստացված եկամուտների «սեփականատերերին» բացահայտելը:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքի նախագիծը լրամշակման կարիք ունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

“Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի “Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին” N 18-Ն որոշման համաձայն:

Գնահատման արդյունքում Նախագիծը՝

1. սոցիալական պաշտպանության ոլորտի վրա ունի դրական ազդեցություն.
2. բնագավառի շահառուների վրա ազդեցության տեսանկյունից ենթակա չէ լրամշակման:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

“Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1.“Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2.Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3.Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ *Նախագծով նախատեսվում է հանցագործության հետևանքով օրինական տիրապետումից դուրս եկած գույքը հանձնել սեփականատիրոջը, օրինական տիրապետողին կամ նրանց իրավահաջորդներին:*

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն
«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի թե ընդունումը, թե չընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտների, ծախսերի, ինչպես նաև բյուջետային քաղաքականության փոփոխման չի հանգեցնում:

Նախագիծ
Պ-1234-07.09.2011-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003թ. ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի վերջին նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Եթե նշված հանցակազմերով գործերի դատաքննությամբ հաստատվում է, որ այդ գույքը օրինական տիրապետումից դուրս է եկել հանցագործության կամ օրենքով չթույլատրված այլ գործողությունների հետեւանքով, ապա այն հանձնվում է սեփականատիրոջը, օրինական տիրապետողին կամ նրանց իրավահաջորդներին:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ համար 2003թ. սեպտեմբերի 29-ից ուժի մեջ մտած ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կոնվենցիան, 2004թ. մարտի 1-ից ուժի մեջ մտած Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման եւ բռնագրավման մասին Ստրասբուրգի, ՀՀ համար 2008թ. հոկտեմբերի 1-ից ուժի մեջ մտած Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման եւ ահաբեկչության դեմ ֆինանսավորման պայքարի մասին Վարշավայի կոնվենցիաները եւ այլ միջազգային-իրավական փաստաթղթերը, ինչպես նաեւ դրանց համապատասխան ընդունված ՀՀ քրեական օրենսդրությունը նախատեսում են դրույթներ, որոնց համաձայն նշված հանցագործությունների

կատարման արդյունքում հանցավոր ճանապարհով ստացված գույքը ենթակա է պարտադիր բռնագրավման: Վերոհիշյալ իրավական փաստաթղթերը միաժամանակ որոշակի երաշխիքներ են ամրագրում՝ ի պաշտպանություն համապատասխան հանցագործությունների զոհերի օրինական շահերի: Մասնավորապես՝ Վարշավայի կոնվենցիայի 25-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետություններն առաջնահերթության կարգով քննում են հանցագործություններից ստացված բռնագրավված գույքը հայցող մասնակից պետությանը վերադարձնելու հարցը՝ այն հաշվով, որ նա կարողանա փոխհատուցում տրամադրել հանցագործության զոհերին կամ հանցագործություններից ստացված այդպիսի գույքը վերադարձնել սեփականատերերին, այսինքն՝ ապահովում են զոհերի վնասի փոխհատուցումը եւ այդ հատուցման մատչելիությունը: Չնայած դրան, ՀՀ քրեական օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի վերջին նախադասությամբ սահմանված է, որ «Հանցավոր ճանապարհով ստացված գույքը ենթակա է բռնագրավման՝ անկախ դատապարտյալի կամ որեւէ երրորդ անձի սեփականությունը հանդիսանալու կամ նրանց կողմից տիրապետելու հանգամանքից», եւ չի նախատեսվում տուժողի սեփականության իրավունքի անհրաժեշտ պաշտպանություն, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան գույքը տուժողին վերադարձնելու հնարավորությունը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 12 հուլիսի 2011թ. ՍԴՈ-983 որոշմամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասը եւ արձանագրել, որ այդ մասի կարգավորման համաձայն ներհամակարգային հակասություն է առաջացել քրեական եւ քրեադատավարական օրենսդրությունների միջեւ, եւ նույնացվել են դատապարտյալի գույքի բռնագրավման՝ որպես պատժատեսակի եւ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման ինստիտուտները: Ըստ քր. օր. 55 հոդվ. 4-րդ մասի իրավակիրառական պրակտիկայի՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագրավման դեպքում այդ գույքն ամբողջությամբ անհատույց անցնում է պետության սեփականությանը՝ առանց տուժողի (առանց օրինական տիրապետողի(գույքային շահերի ու սեփականության իրավունքի պաշտպանության:

ՀՀ ԱԺ աշխատանքային խումբը հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինական տիրապետողին հանձնելու վերաբերյալ քր. դատ. օր. 119 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում եղած դրույթը փոքր-ինչ այլ ձեւակերպմամբ վերարտադրել է քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասում եւ վերացրել է քրեական ու քրեական դատավարության օրենսգրքերի միջեւ եղած ներհամակարգային հակասությունը: Դրանով իսկ վերացվել է նաեւ ՀՀ քր. օր. 55 հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 5-րդ մասի (տուժողին պատճառված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով(եւ 31 հոդվածի 2-րդ մասի (ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի(պահանջներին հակասելու հանգամանքը: Մյուս կողմից՝ ապահովվել է քրեական գործով տուժողի (գույքի օրինական տիրապետողի(շահերի պաշտպանությունը: